**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-6/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ՀՐԱՏԱՊ ՄԵԿ ԱՆՁ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան **22.11.2019թ.**
ժամը 16:00

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ պետ Հ.Մելիքյանը,

**գնահատողներ՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ իրային, ՎՔՆ, կուլտուր կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ.Ռատյանը,
- ՀՀ ՊՆ Կ և ՌԿ վարչության ՀՀ և արտասահմանյան երկրների ուսումնական հաստատություններում կադրերի պատրաստման բաժնի ավագ սպա, մայոր Տ.Հունանյանը,
- ՀՀ ՊՆ Կ և ՌԿ վարչության գլխավոր մասնագետ Վ.Իրիցյանը,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:

***«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-6/1» ծածկագրով հրատապ մեկ անձ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

**(Մ.Ամիրյան)**

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման, մասնակիցների՝ հրատապ մեկ անձ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, դրանց հրատապ մեկ անձ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

***1 Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման, մասնակիցների՝ հրատապ մեկ անձ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, դրանց հրատապ մեկ անձ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.***

**(Մ.Ամիրյան)**

1.1 Քանի որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի **20.11.2019թ.**-ին տրամադրած՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չեն ունեցել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից ներկայացված հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

**Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չի քննարկվել (գնահատվել):**

1.2 Հիմք ընդունելով վերոնշյալը հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներին հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-6/1»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

**(Մ.Ամիրյան)**

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-6/1»** ծածկագրով հրատապ մեկ անձ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը $16^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:*

| | | |
|---|---|---|
| Գնահատող (ԳԱՊ) | ______ | Հ.Մելիքյան |
| Գնահատող | ______ | Գ.Ուստյան |
| Գնահատող | ______ | Տ.Հունանյան |
| Գնահատող | ______ | Վ.Իրիցյան |
| Գնումները համակարգող | ______ | Մ.Ամիրյան |